

Ծննդեամբ Մուրացանը Շուշեցի էր (1854 թուին), իսկ իւր ուսումը աւարտել էր նոյն քաղաքի Հայոց թեմական հոգեուր դպրանոցում, որից անմիջապէս յետոյ մտել էր ուսուցչական վշոտ ասպարէզը և ապա անցել Թիֆլիս առևտրական մի հիմնարկութեան մէջ հաշուապահական պաշտօնով:—

Թէե խղճուկ էր հայ վիպագրողի կեանքի մնացորդը, բայց գորա փոխարէն չքեղ էր նորա թաղումը, առհասարակ հայերս չքեղ թաղելու խիստ մասնագէտ ենր:

Սեպտեմբերի 7-ին թաղեցին Մուրացանին Ագահանդէսը կառավարում էր այդ առթիւ կազմուած մասնախումբը: Եկեղեցական առաջի արարողութիւնը կատարուեց հէնց հիւանդանոցում՝ հանդիսագրութեամբ թեմական առաջնորդի, որ և առաջի դամբանականը խօսեց հանդուցեալի դագաղի վրայ վանքի Մայր Եկեղեցում: Թէ վանքի բակում և թէ գերեզմանատանը դագաղի վրայ խօսողներ եղան բաւականին: Հայ հասարակութեան համարեա թէ բոլոր խաւերը մասնակցել էին թաղման սգաւոր հանդիսին թէ անձամբ և թէ ներկայացուցիչների միջոցով: Ներկայացուցիչներ եղել են նաև շատ քաղաքներից ու հաստատութիւններից, ի թիւս որոց և Մայր Աթոռի ձեմարանի կողմից: Դրուել են և պսակներ, ինչպէս և արուել դրամական և այլ նուիրաբերութիւններ, ստացուել են յանձնաժողովի անուամբ և բաւականին թուով ցաւակցական հեռագրեր, ի միջի այլոց և «Արարատի» խըմբագրութիւնից: Ագահանդիսի բոլոր ընթացքում կարգի վրայ հսկել է կարգագրիչ յանձնաժողովը, որ արժանի է ի հարկէ բուռն չնորհակալութեան:—

Մուրացանը թաղուեց Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը իւր գրչակից Ծերենցի և Աւագիու մօտ:

Հանդիսա ոսկորներիդ բեղմնաւոր հայ գրչակիր:—

+ ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆ

Տաճկահայոց և մեզ լաւ ծանօթ գէմբերից մէկն էր Մարկոս Աղաբէգեան, որ օգոստոսին յետին չքաւորութեան մէջ կնքեց իւր մահկանացուն:

Նա ծնուած է 1830 թ., իզմիրում և իւր կրթութիւնն ստացել է տեղի Մեսրոպեան վարժարանում, ապա ուղարկուել է Փարիզ 1843 թ., Մուրատեան վարժարանը, ուր իւր ուսումն աւարտեց 1849 թ., Դառնալով հայրենիք՝ Մատթէոս Մամուրեանի հետ բաց արաւ «Աղաբէգեան» վարժարանը, որ չորս տարի շարունակուեց։ Ապա իւր պաշտօնակցի հետ Մեսրոպեան վարժարանի ուսուցիչ հրաւիրուեցաւ, ուր 1857/8 տարին տեսչութեան պաշտօն ևս կատարեց։ Նոյն տարին նա Պոլիս տեղափոխուեց և ապա Մատթէոս նորընտիր կաթուղիկոսի հետ որպէս անձնական քարտուղար էջմիածին անցաւ։ Կարճ ժամանակից յետոյ նա ուսուցիչ հրաւիրուեցաւ Ներսիսեան դպրոցը։ Հ. Էֆէնջեանցի հրատարակութեամբ 1860—1864 թ. թ. նա խմբագրեց «Կոռունկ Հայոց աշխարհի» ամսաթերթը, իւր շուրջը հաւաքելով ժամանակի կարող անձնաւութիւնները։

Կրկին նա Պոլիս է դառնում 1865 թ., և ջերմ մասնակցութիւն ցոյց տալիս կաթուղիկոսական ընտրութեան հարցում, հրատարակելով «Տեղեկադիր ամենայն Հայոց կաթուղիկոսութեան այժմեան վիճակին վրայ» 1865 և «Քննութիւն 1836 թուի հաստատած էջմիածնում (պօլօծենիայի)» և «Կարդ ու կանոն Հայաստանեայց եկեղեցւոյ կաթուղիկոսական իշխանութեան» 1865։ Նոյն թուին նա առանձին գրքով հրատարակեց «Գարեգին Արուանձտեանց» ողբերգութիւնը, որ առաջ հրատակուած էր Կոռունկի մէջ։ 1866 թ. նա հրատարակում է «Ծիլն Աւարայրի» ամսաթերթը, ուր Տաճկահայոց ծանօթացնում է արեւելեան Հայոց վիճակը Ռուսաց աիրապետութեան ներքոյ, կաթուղիկոսի իրաւանց սահմանափակումը պոլոյենիայով և այլն Ընդհանրապէս նա ուսուատեաց էր և իւր հայրենակիցներին համոզում էր խեղդել այն համակրանքը, որով տուգորուած էին նորա գէպի Ռուսաստանը։ Նա աշխատակցել է նաև Ռուսահայոց «Փորձ» և «Հումայր», իսկ Տաճկահայոց «Հայրենիք», «Բիւզանդիոն», «Մասիս» թերթերին։ Թողել է և անտիպ աշխատութիւններ, որոնցից նշանաւորն է Հայոց պատմութիւնը 4 հատոր։

Երեսփոխանական պաշտօններ էլ կատարել է երկու անգամ՝ 1871—1874 կ. Պօլսոյ Բերայի թաղի կողմից, իսկ 1882 թ. Վանի գաւառի Նա կատարել է նաև պետական պաշտօններ. կարճ ժամանակով եղել է Վանի կուսակալի օգնական, Ռէժիի քննիչ Այնթափում և այլն։ Վերջին 10—15 տարիները անգործ էր և չքաւոր դրութեան մէջ։

ՄԱՆՐ ԷՌԻՐԵՐ

Անցեալ մայիսին Պարսկաստանի Նոր-Ջուղայում տօնուել է քաղաքի Ա. Կատարելեան ազգայի սրբորդաց գլուխցի 50-ամեայ յոթելեանը, որի առթեւ կազմուել է և մի Նոր «Նոր-Ջուղայի հայոց կրթական-գրական ընկերութիւն», ընկերութեան նպատակն է՝ նպաստել Պարսկաստանի հայաբնակ գիւղերի լուսաւորութեան գործին։

Օդոստոսի 13-ին Պօլիս է վերադարձել Երուսաղէմից սըրբազան Խղմիրլեանը, որին Պօլսի հայ և օտար ազգաբնակութիւնը մեծ և չտեսնուած շքեղ ընդունելութիւն է ցոյց տուել թէ՛ ծովի և թէ՛ ցամաքի վրայ։ Ծովի վրայ նախկին պատրիարքին դիմաւորելու են Ելէր մօտ 32 մեծ ու փոքր նաւեր հազարաւոր ժողովրդով և հաստատութիւնների, ընկերութիւնների ըազմաթիւ ներկայացուցելով, որոնք արտասանել են և ճառեր։ Դիմաւորել է նաև թուքը զինուորակ. նախարար Ալի Ռիզա փաշան։ Նոյն շքով հարցըել են սըրբազանին մինչեւ Գում-Կաբուել իւր օթեանը։

Խնչպէս յայտնի է խօլերան տարածուած է արդէն Ռուսաստանի մօտ քառասուն նահանգներում և յատկապէս Պետերբուրգում, ուր վարակուօջների թիւը օքեկան հարիւրի է հասնում։ Թագաւոր կայսրը իւր անձնական միջոցներից 15,000 ռուբլի է նուիրել խօլերայի գէմ կռուելու համար։